

## ԱԽԼՑԽԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ

( 1828-1829 )

Տիսուր ճակատագիր մ'է Հայրենեաց  
նոր դէպքերը, լիշել փափագած ժա-  
մանակնիս, բռնատատուիլ պատերազ-  
մներ, արինչնեղութիւններ և աւե-  
րակներ շարակարգել և փոխանակ հայ-  
անուն դիւցազանց, փոխանակ ջի-  
գաններու, ջրդատներու, Աշոտներու,  
լևոններու, որոնց յիշատակութիւնն  
եեթ կը թնդացընէ սրտերնիս, գիմել  
այնպիսի անուններու՝ որոնք մեղի հետ  
յարաբերութիւն մը չունին ոչ ազ-  
գութեամբ և ոչ ալ զգացմամբք: Ա.Ա.  
որովհետև այս է միանդամ պայսման-  
նիս, և այս պատերազմնունք այնպիսի  
դէպքեր են և այնպիսի հետևանքներ  
ունեցած են իրենց ժամանակին, և  
նոյն իսկ այսօրուան մեր ազգութեան  
վիճակին վրայ, որ ոչ միայն ոչ աւելորդ՝  
այլ մանաւանդ ամեննտիւրենոր կը տես-  
նանք զանոնք յիշատակելու: և որչափ  
որ ալ անոնց մասնակից չենք եղած, և  
ոչ ալ անոնց պատճառքը և դրգուզքը,  
յաղթողք և կամ պարտեալն, սա-  
կայն ամենէն աւելի, մենք եղեր ենք  
զանոնք կրողք և անոնց հետևանքնե-  
րը զգացողք, լսողք և տեսնողք, և մեր  
հայրենիքը կրնանք ըսել որ մրցա-  
րան և մարզարան մը դարձաւ այն-  
պիսի զօրավարաց, որոնք իրենց զի-  
նուորական հանճարով և արութեամբ  
զարմացուցին բոլոր երլուա և բոլոր  
Ասիա, յորս առաջին կարգի կրնանք  
յիշել երկու ոռուս հռչականան զօրա-  
վարներ, Փասրեիչ Երևանու կոմնը և  
Վարաննազով. և աւելի խոնարհ համբա-  
ւով բայց և ոչ աննշան զչակիքի-փաշա  
Ժամանեան պետութեան Փոքր-Ասիոյ  
սպարապետը:

Բազմաթիւ և կրնանք ըսել նաև թէ  
անհամար եղան այս զօրավարաց մըրյ-

մունքներն, անոր համար դժուարին  
զամենն ալ յիշատակել. մենք միայն  
կ'ուզենիք տեսնալ երկու բանակները  
Ախլցիսայի դիմաց և անոր պարսպաց  
տակ, և տեսնալ այն պատճառքը որով  
Վրահայոց այս ճոխ և հարուստ քաղա-  
քը յետ հարիւրաւոր տարի Օսմաննեան  
պետութեան մէջ կէս անկախութեամբ  
մ'ապրելու, անցաւ յետին պատե-  
րազմներով Ռուսաց ինքնակալութեան.  
կրելով ցայսօր այն աղետալի վէրքերը  
զորս ստացաւ պատերազմին միջոց, և  
որք մինչև ցայսօր չեն բժշկուած:

Թողլով'ի բաց երկուց Գետութեանց  
մէջ պատերազմին գրգռուելուն պատ-  
ճառքը, երկու կողմի հանդերձանքը,  
հրամանատարներուն եռանդը, Փաս-  
քիեչի Արքա-շայ անցնիլը, Ղարսի  
պաշարումը, Հալիպ Փաշային արի ընդ-  
դիմութիւնը և վիրջապէս անձնատուր  
ըլլալը. չյիշելով նաև ահաւոր ժանտ-  
ախտը, որ պատերազմին պէս հազա-  
րաւորներ հնձեց, Ախալքալաքի 4,000  
Կտրիճ Հազերուն մրցիլը, մենք կը փա-  
փաղինք միայն Ռուսաց բանակին հե-  
տելի Ախալքալաքի ճամբով և հասնիլ  
Ախլցիսայի դիմաց, որուն բնակիչքը  
դռները գոց, իրենց ժամանակակից  
Միսալունկիի քաջաց նման լուր զրկեր  
էին ուսւ զօրավարին, գալ անձամբ  
առնուլ բանակիները: Որով և աւելորդ  
էր յուսուլ ինքնայօժար անձնատրու-  
թիւն մը. և Փափկեիչ մօտեցաւ քաղա-  
քին բարձանց, ամրոցներ կառուցանե-  
լու համար, (1828 Օգոստոս), և զըն-  
նելու քագեին դիրքը:

Ախլցիսա, որ Փոցխով գետակին ե-  
ղերքը կառուցեալ է, իր թիկունքը ու-  
նենալով կիսաբոլորակ լերանց շղթայ  
մը, 1828ին Ասիոյ Տաճկաստանի ամե-

ՆԵՆ ճոխ քաղաքներէն մէկն էր, և ուր հարստութիւնը մեծաւ մասամբ հայ վաճառականաց ձեռքն էր, որովք քաղ-քին բնական և շահաւէտ դրից հաւ-նելով՝ կը դիմէին հօն հաստատուելու : Եւ յիրաւի, Ախլցիսա ամենօրեայ յարա-բերութիւններ ունէր իրեանու, կար-նոյ ռջդիմիսի և Տրապիզոնի հետ : Ա-նոնց միջնցով՝ կ'ընդունէր Ռուսից և Եւրոպից բերքեր, և ի՞նքն ալ պարփի, թաթար և կովկասիան վաճառներ կը յուզարկէր անոնց՝ քազմաթիւ կարա-ւաններով : Եթէ Ախլցիսա այսօրուան օրու աննշան կամ երկրորդական քա-զաք մ"է, պատճառը պատերազմունքն են, որոնք աւերեցին և այրեցին քա-զաքը և բնակչաց շատին փախստեան պատճառ եղան իր մէջն ունէր Հայոց հինգ եկեղեցի, յորս նշանաւոր էր մա-նաւանդ Ա. Յովհաննիսի հին եկեղե-ցին, բարձր բերդին վրայ շինուած . Այա Սովիայի ձևով շինուած մեծ մզկիթը, զոր յետոյ Ռուսկ յեկեղեցի դարձուցին, և Փաշային ճոխ տունը : Քաղաքը կրկին ամրութիւն ունէր, նախ միջնաբերդը, յետոյ արտաքին պարիսպները, որոց վրայ ԿՕ հրա-նօթք զետեղուած էին, 'ի բաց ա-ռեալ Գայա-տաղի վրայ գտնուած թնդանօթքը, ուր էր նաև Հայոց եկե-ղեցին : Մրտուքին պարիսպը աշտարակ մ'ունէր և յորս ամբարտակ, որոնք մէկմէկու հետ կապակցութիւն ունէին ցցապատճշներով . և այս ցցապատճ-շից երկու կողմը մեծամեծ փոսեր փո-րուած էին : Բաց ասոնց՝ կը տեսնուէին դարձեալ հօն հօն փոքր ամբարտակ-ներ և աշտարակներ հրաձգողաց ապա-ւինի համար, Սակայն Ախլցիսայի ամե-նէն մեծ պաշտպանութիւն՝ իր արի և պատերազմանէր բնակչաց եռանդն էր, որոնք ըստ հին առածին կը պար-ծէին, որ մէկ Ղարսեցի՝ երկը երևան-ցի կ'արժէ, և երկու Ղարսեցի՝ մէկ Ախլցիսացի . և ահա եկեր հասեր էր ժամանակը ցուցնելու որ արդեք մէկ ուուր քանի Ախլցիսացի պիտի արժէր և կամ հակառակաւ : 10,000 քաղա-

քացիք ջաճիկ, լազ, Հայ և Հրեայց զինուորեր էին . կային նաև կ. Պօլսէն փախած է էնիշէրիք : Ասոնցմէ զատօգ-նութեան դիմեր էին Քէսէ-Մէհմէտ և Մուսուդափա փաշաները, հետերնին բերելով 10,000 հեծեալ . որով ընդ ամենը զրեթէ 30,000 կրնանք հասցը-նել Տաճկաց բանակը : Այս գունդերը քաղքէն գուրս չորս կէտ բռնեցին, ա-ռաջինը՝ հիւսիսային բարձունքը, եր-կորդը՝ Դուլզա մզկիթին քով Գայա-տաղի աշտարակէն մէկ մզոն հեռու, և պիտի պաշտպանէր Փոցինով գետա-կին կամուրջը . երրորդը՝ որ ամենէն բազմաթիւն էր՝ 'ի Սուլիս Արտա-հանի և մերձաւոր աւանաց ճամբուն վրայ : Մրրորդը՝ յԱշակա-փաշա՝ քաղ-քէն հինգ մզոն հեռու :

Իսկ Ռուսաց բանակը ըստ իրենց պաշտօնական թուահամարցն հազիւ 12,000 կը համանէր, և անոր համար իսկ ընդհանուր հրամանաստարը Փաս-քել երևանսպի, խոհեմութիւն համա-րեցաւ պաշտպանողական մասը ընտրե-լու, մինչև որ ուրիշ պահեստ գունդեր ալ հասնին օգնութեան և զօրս կը բե-րէր Փոփով զօրափարը : Անոնց հասնե, լէն վերջը, Փափէլի սահմանեց իր յանդուգն ծրագիրը, այսինքն ինչնալ յանակնկալս փաշաներուն գնդին վե-րայ, տիրել անոնց հիւսիսային ճամ-բարին և զանոնք Ախլցիսայէն բաժնե-լով վանել յԱրտահան :

Այս յանդուգն ծրագիրը կատարե-լու համար, հարկ էր որ Ռուսաց բա-նակը փոխէր իր դիրքը, և Փաքքէի թշնամիէն չիմացուելու համար, առա-ջարկեց խորհրդեան մէջ գիշերը ծա-ծուկ յուել 'ի Ցիրուու և թշնամեաց գունդերուն դիմաց կեդրոնական զիրք մը բռնել : Փութով յանձնուեցաւ Մու-գա-Պէկի, զօր գերեր էին Ախլցիսա լուսք, գլուխ կենալու այս չույն և առաջնոր գելու սիւնակներուն : Մուգա-Պէկի՝ որ դրամի ուժով մասնուեր էր սիրով Ռուսաց, յանձն առաւ պաշտօնը, և գունդերը գիշերանց ուղղուեցան 'ի Ցիրուու : Որչափ որ ճամբան դիրքա-

գնալի էր, սակայն տեղ տեղ խոռոշ ներու հանդիպելով, սայլերը մեծ դրժուարութիւն կրեցին, բաց ասկէ՛ գունդերէն ոմանք մոլորելով մինչև ցլոյս, միւս համարները՝ ի Ցիրուս՝ մոլորելոց սպասած ժամանակին, Տաճիկը իմացան և տեսան թշնամոյն շարժումը և պատերազմի ահաւոր շառաջ մը հընչեց բանակին մէջ: Փասքեիչի խորհուրդը յերեան ելլալով, իրեն ուրիշ ճամբայ չէր մնար, բայց կամ յայտնի պատերազմ տալ և կամ նորէն իր սովոր ճամբարը քաջուիլ: Այս երկու խորհուրդոց մէջէն առջինը ընտրեց, և մերձաւոր խրձանց վրայ քանի մը թնդանօթ շարելով փութով սկսաւ կրակ թափել փաշաններուն զօրաց վրայ, որոնք գումարելով իրենց գունդերը Ռուսաց Ճախին վրայ կը գիմեն: Ռուսաց հաստատուն կը կենան աեցերնին, իրենց կրակով կը յանան օսմաննեան բանակին արութեան պատասխանել: Հեղեղատի մը ցամբած անկոլոնցն մէջ արիւնահեղ կուի: մը կը ծագի սրով և սուխններով, և երկու կողմանէ ալ օգնութիւն հասնելով, պատերազմը ընդարձակուեցաւ. բայց երկու կողմն ալ բաց ՚ի մեռելոց թիւէն ուրիշ շահ մը չունեցաւ և կէսօրունէ առաջ քաջուեցան:

Ասոր նման ուրիշ խառնուրդ մ'ալ կը հանդիպի գարձեալ կէսօրուընէ երկու ժամ վերջը. և Տաճիկը նահանջելու վրայ էին, երբ տեսան որ Ռուսաց նոր օգնական գունդեր կը հասնին, որոնց կը հրամայէին Մուրավիէֆ և Քորոլովի հազարապետները: Այն ատեն Տաճիկը ամփոփուելով՝ մեծադրոյն պատերազմի մը համար, շարուեցան Սուխիխի և Աշակա - փաշայի մէջ. և Քորոլովի չափազանց եռանդէն և առանց սպասելու ուրիշ հասնելիք գունդերու, նշան տուաւ պատերազմի՝ համարելով յանակնկալս բռնել զթըշնամին: Բայց Տաճիկը, որ ՚ի սկզբան չէին պատասխանած հարուածներուն, երբ մօտեցան Ռուսը՝ այն ատեն զիրենք կրակի մը մէջ պաշարեցին: Քորոլովի ինքն ալ ինկաւ իր զինուորաց զիա-

կանց վրայ, և ո.ուս բանակին մէջ խառնակութիւն մը տիրեց: Պատերազմին ծուխին և կրակին հետ միացան նաև երկնքի որոտմանքները և կայծակները, ինչպէս նաև ահաւոր միրիկ մը: Ռուսք անզլուխ մնալով շուարեցան. մաս մը յետո ընկրկեցաւ և մաս մ'ալ պատերազմի դաշտին վրայ անկենդան մնաց: Ապայն հազիւ Տաճիկը սկսեր էին յաղթութեան կեցցէները հնչեցընել, երբ հասան Ռուսաց օգնական գունդերը, որոնց առաջնորդ կը հրամայէր Պորոտին հազարապետը, և այս տակաւին անխննջ գունդերը կեցցէ գունելով դիմեցին Տաճկաց վրայ, որոնք յոգներ և թուցեր էին: Պորոտինի գունդին յաղթութեան նաև Ռէու և Մուրավիէֆ հազարապետաց գունդերը, որով և Տաճիկը յանակնկալս պաշարուած, սկսան խոյս տալ զէպ ՚ի ցցապատնէշները, թողլով դաշտին վրայ իրենց մեռեալը և վիրաւորքը: Ի զուր ՔէսուէՄէհմէտ, որ ծանր վիշը մ'առեր էր ՚ի սրունս, կը գոյշէր կ'աղաշէր ետ դառնալու և թշնամոյն չթողլու գոնեայ քաղքին ճամբան, բայց մտիկ ընողչկար. այն ատեն ինքը որչափ որ կը Ռուսար՝ քովը գումարելով ընդ ամենը 5,000 հոգի քաշուեցաւ յԱլիլցիս (օգոստ. 9):

Նոյն օրուան Տաճկաց կորուստը կը համարուի 1,500 մեռեալ, 500 գերի ՚ի փալսատէից, 10 թնդանօթ, 10 դրօշ և անբաւ պաշար և պատերազմական կազմած: կը մնայ հաւասարել որ ինչքան եղեր է Ռուսաց կորուստը, որով հետև որչափ որ ալ իրենց պատմագիրք գրեթէ ամբողջովին սպառած կը համարին Քորոլովի չոկատը նոյնպէս նաև մեծապէս վասառած առջի խառնուրդներուն մէջ, այսու հանդերձ պաշտօնական թուղթք մեռելոց թիւը կը գնեն ոչ աւելի քան զ80 և 400 մ'ալ վիրաւոր: Այս պաշտօնական թուղյն նուազութիւնը թերեւս զարմացնէ զմեղ բայց նոյնը կը հանդիպինք նաև քիչ վերջը ուրիշ պատերազմներու մէջ ալ յԱլիլցիս, ՚ի կարին և ՚ի բարերդ:

և մինչ այս յետնոյս արիւնահեղ կոխւ ներուն մէջ ժամանակակից ծերունիք անթիւ կը դնեն մեռելց թիւր, և զէր պէրեանը իր Հայոց պատմութեան մէջ Ռուսաց կորուստը 4,000 կը համարի Ռուսաք 400էն աւելի չեն հաներու

Բաց մենք հիման թողլովի՞ի բաց այս թուահամարոց տարածայնութիւնքը և անոր պատճառքը, ֆաւքեիչի բանակին մօտենանք, որ հիման անմիջապէս Ախլցիսայի պարսպաց տակն էր, և նուիրակ զրկեր էր ՚ի քաղաքն զլուդագէկ որ անօգուտ տեղ դէմ չկենան և անձնատուր ըլլան: Սակայն բնակիչը, որոնք դեռ ուժերնին չէին կշռութ Ռուսաց հետ, մերժեցին նուիրակութիւնը.

և ահաւոր կը բակ մը սկսաւ երկու բանակաց վրաց թագ փիլ (օգոստ. 10): Այս երկն ատեղաց կրակիններքն ֆաւքեիչ երկու օր անցուց նորամբարտա կներբարձրաց ընելու համար, և 12ին նորէն նուիրակ Ալբանու: — Ա. Յովհաննես եկեղեցի, որուն քով եղաւ զօրաց արիւնանեղ խառնորդ մը:



Ալբանու համար: Սակայն Քէսուէ-Մէհմէտ, որ նորէն ընդհանուր հրամանատարութիւնը ձեռք առեր, էր մերժեց ուսւ զօրավարին պայմանքը և պատրաստուեցաւ մինչև ցյետին կէտ ընդդիմանալու: .

Փասքեի չսահմանեց վճռական յարձակումը ըննել վերափոխման օրը, և նուրանոր հրանօթից լուծեր շարեց Գայսա-տաղի դիմաց, ուր էր նաև Հայոց եկեղեցին: և 15ին առաւոտը, յետ ներկայ գանուելու զօրք աստուածային պաշտաման, բոլոր թնդանօթները միաբան պարպուելով նշան տուին Ախլցիսայի պատերազմին զոր ցայսօր սարսափով կը պատմեն տեղացիք:

Տաճիկը այնքան անկասկած էին այն օրուան յարձակման վրայ, որ շատերը իրենց բնակութիւնը քաշուեր էին և այն ահաւոր որոտմանց ձայներէն զար հուրած, վազեցին իրենց նշանակեալ տեղերը բռնելու, և 500 հոգի որ Հայոց եկեղեցւոյն քով բանակեր էին, առաջինք եղան յարձակողաց հետ կը ուուելու, որոնց գլուխ կեցեր էր Պորոտինի կարիճ հազարապետը: Պորոտինի գունդը բռնադատուեցաւ տուինով և թրով մրցելու այն մէկ քանի քայլին համար զոր չահեր էր բայց ամենին մնել եղին խառնուրդը եղաւ եկեղեցւոյն դիմաց, ուր անողորմաբար կորիճ երիտասարդներ այն իրենց առողյ և գեղեցիկ հասաւ կը, զոր իրենց տնակներուն հովանեաց տակ մնուցեր և մեծցուցեր էին, հօս հիմայ կը դուհէին, աւաղ, ինչքանի համար... մարդկային վրէծւն գրութեան մը համար: Եթիրաւի ըստ պատմը չաց և ականատեսից Ախլցիսայի պատերազմը մեծ պատույ նիւթէ մ'է երկու կողմի զինուորաց, բայց արդեօք հաւասարապէս ալ պատիւ մ'է մարդկային զգացման: Սակայն այնպիսի կէտ մը հասեր էին որ հարկ էր չզանդաղիլ, որովհետեւ իտուքք քաջաբար և աներկիւզ կը յառաջին: Տաճիկը՝ գերեզմանաքարերու ետև ամբացած, անձրեի պէս գընտակին կը տեղային նուևաց վրայ, որոնք փոխազարձ կը պատասխանէին: Փութով գառնուրդը ծագեցաւ, ուր ոչ խնայող կար և ոչ կենաց համար աղերսող, և որ զարմանալին է, կանայք բնակութիւնին թողուցած, գիմեցին օգնելու արանց և փոսէն գէպ ՚ի վար

քար գլորտկցընելով՝ շատ մը ռուս զի. նուորաց կեանքը յափշտակեցին : Եղաւ ժամանակ մը՝ յօրում Ռուսք եկեց դեցւոյն տանեաց վրայ ելան . բայց վուժով հարուածեալ վար թաւալցան : Պորոտին այս խառնակութեան միջոց գերեցմանաքարի մը վրայ ելած , աներկիւզ և անխոց կը գոչէր նշան կուտար և քարէ քար կը ցատքէր , կը խրախուսէր իւր զինակիցքը դիմանալ քիչ մ'այլ՝ մինչեւ որ հասնի հրանօթ մը որուն անվրէպ կը սպասէր . և ահա չուշացաւ փափոքած զէնքը և բազմաձայն ուրբան մ'իմացուց ամենուն որ յուսացեալ օգնութիւնը հասեր էր : Այն ատեն Պորոտին վասահ յաղթութեան վրայ , կ'ուզէ իր յաջողութիւնը իմացընել փասքեիչի . և հազիւս սպայ մը ճամբու զրեր էր առ հրամանատարն , երբ գնտակի հարուած մը փոեց զինքը գերեհզմանի մը վրայ՝ երեսը գէպ 'ի ցուրտ վէմլ դարձած : իրեն տեղ հրամանատարութիւնը առաւ մէկէն ամենէն հին սպայն՝ Պուրցով հազարապետը , որ հրամայեց կրակը ուղղել գէպ յեկեղեցին և այն տուները , զոր իրենց բերդ ձևացուցեր էին Տաճիկք : Փութով կը հասնին փափեիչէն զրկուած ուրիշ օգնութեան գունդեր ալ և իւսուք անհամար կորստեամբ՝ սուխնով և հրացանի կոթով կռուելով . կը ափրեն եկեց դեցւոյն և գերեզմաննոցին , ուսկից Տաճիկք կը քաշուին քաղքին փողոցները :

Ժամը 6 ½ էր ըստ եւրոպացւոց , և որչափ որ յաղթութիւնը Ռուսաց կողմէ կ'երեար , սակայն Տաճիկք նորէն միացած , տեսան թշնամուն ալ թեոյն ալիարութիւնը և պատրաստեցաննոր յարձակում մ'ընելու : Փափքեիչի իմացաւ վտանգը , նէւոփ պատուիրեց որ սորզներու գնդով մ'ուղղակի յառաջել գէպ 'ի պատնէնելոր . իւէու առանց երկնատեղաց կրակին ուշ զնելու , հասաւ մինչեւ պատնէշները և մինչդեռ զինուորք ճակատ առ ճակատ կը կըռուէին , 20 ռահիրայք գերաներ վար կ'առնուն և կամուրջ մը կը ձևացընեն

փոսին վրայ , ուսկից ջոկատները ներս վաղելով կը տարածուին պատնիաց վրայ : Այս շահէն վերջը , ուրիշ բան չէր մնար բայց գիմել քափքին փողոցները և տիրել քազքին . բայց նուաք ասզած մնացին երբ ամեն տուն բերդ մը դարձած տեսան , զոր առանձին յարձակմասիք պէտք էր առնուլ : Ժամը երեկոյեան 7 էր և դեռ անորոշ էր յաղթութիւնը : Փասքեիչի յուսահատած և տեսնալով որ արեր խոնարհելու վրայ է , տիրելու ուրիշ հնարք մը չտեսնալով , վերջապէս տուաւ այն գժբաղդ հրամանը և մոխիր դարձնելու գքաղաքը » :

Կոյցակի պէս հրամանը տարածուեցաւ գունդերուն մէջ , զօրաց մաս մը հրալից զնդակներ կը պատրաստէր , մաս մը պատուհաններէն և ծխաններէն զանոնք ներս կը նետէր և հեծեալք կը վազէին մերձակայ զիւղերէն յարդ և ուրիշ զիւրակէզ նիւթեր բերելու : Փութով սկսաւ հրդեհին ծուխը , և նախ մնութ խաւար մը , ապա շառագոյն լցոս մը տարածուեցաւ բոլոր քաղաքին վրայ , երկինքը կարմիր տաքցուցած երկամթի գոյն մ'առաւ , ուսկից իւր թէ բրդելով վար կ'ինկնային ուրիշ հրալից զնդակներ , որոնք ինկած աներնուն մէջ փութով հրդեհ կը ձըգէին : Բնակիշներէն ումանքներս կրակ սկսած ժամանակ , գուրս կ'ելլային պատին յեցեալ թշնամեաց հետ տակաւին ճակատ առ ճակատ մրցելու , ուրիշները՝ ներս կը մնային ոյլելու . տեսնուեցան գարձեալ շատ մը կանայք որ իրենք զիրենք կրակին մեջ կը նետէին : Հրցոյն թողուցածը՝ սուրը կը լմնցնէր , և 400 հոդի որ մզկիթը ապաւիներ էին , ամենն ալ մեռան . վրայ եկաւ նաև հով մը , որ զկրակը սփաեց գէպ 'ի հիւսիսային և արևելեան մասերն ալ :

Ճակատ վերջապէս զիւրերը . գիշեր . ահաւոր , զոր օրուան կը փոխէր ամբողջ քազքին վրայ տարածուած հրաշէկ պղնձեայ երկինք մը : Այն մեռելատիպ և գժոխակերպ լուսոյն ներքե

տակաւին հրանոթից գոռում գոչումները կը շարունակէին, և ֆավքնիշ տակաւին քայլ քայլ կը յառաջէր փողոցներուն մէջ: Անցաւ կէս զիշերը և օդուն մէջ գնդակները կը սուլին և տեղ տեղմաքառումները կը շարունակէին. և հաղիւ առաւտեան ժամը երեքին թուքը ալ ընդդիմութիւն շտեսներով, դադրեցուցին կրակը և սպասեցին լուսոյն, որ արդէն սկսեր էր երենալ շառագոյն ճառագոյթներով ծուխերուն և ամպերուն մէջնէն: Տիտուր տեսարան մ'այլ այն ատեն բացուեցաւ դիմացնին, երբ խել մը կանայք, տղաքը և ծերը սովալլուկ և պատառատուն ըզգեստներով, ծեռուլնին բացած իրենց դիմեցին քիչ մ'օգնութիւն խնդրելու:

Ասոնց յաջորդեցին միջնարերդէն դրկուած նուիրակները, որոնք հինգ օր զինադադարումն ինդրեցին, ասկայն ֆավքնիշ մորիկ չընելով՝ հազարապետ մը դրկեց որ անձնատուր ըլլան. և փաշաները տեսնալով որ ալ անկարելի էր պաշտպանուիլ; Հաւանեցան. այն պայմանաւ որ զինուորական պատուով և ազատ մեկնին բերդէն իրենց զէնքերով և պաշտուվ: Փավքնիշ կէս մը ուղելով պատուել իր կորիճ թշնամիքը որոնք առիւանանման կուուր էին և կէս մ'այլ չուզելով նորէն արիւն թափել, յանձն առաւ և գաշինքները ստորագրուեցան: Քիչ վերջը ժամը 8ին վ. Գէորգայ դրօշակը կը ծածանէր այն պատուարաց վրայ, որոնք 250 տարուընէ ՚ի վեր Օսմանեան պետութեան անխոռվ պաշտպանութիւնքը եղեր էին: Եւ տաճիկ գունդերը զանոնք թողլու ժամանակ չէին կրնար գոռող տիրութեամբ մը զանոնք չնկատել: Իրենց ելլաչէն վերջը, Փավքնիշ ներս մտաւ յաղթանակաւ. սակայն փողոցներուն մէջ անկարելի եղաւ յառաջել, որովհետեւ այնքան բազմաթիւ էին դիմակոնք որ շատ տեղ, տիսնուր տեսարան, հարկ եղաւ կոխսկատելով անցնիլ անոնց վրայէն, և աւելի սաստկագոյն լսել երբեմն նաև կիսամեռ անկելոց ճիչքը և աղերպը:

Տաճկոց կողմանէ ընդ ամենը 5,000 կը համարուին անկեսակը, յորոց 2,000 քաղաքացիք էին. և յորս գտնուեցան նաև հարիւրաւոր կանայք առնացի հագուած: Խակ Ռուպք կորսնցուցին ըստ իրենց հաշուին 128 հոգի, 500 ալ վիրաւորը. թէպէտ աւելցընենք՝ որ ըստ տեղացոց բազմաձայն վկայութեան, այնքան բազմաթիւ էր իրուաց կողմանէն անկելոց թիւը, որ փոսերուն մէջ արեան առուակ մը ձեացաւ, և որ մինչև զումանս՚ի դիմականց առաւ տարաւ՚ի բաց:

Հրգեհը քաղքին երրորդ մասէն աւելի լսափեր էր և ֆավքնիշ մեծ աշխատութեամբ հազիւ կրցաւ մարել: Յետոյ փութով քաղքին մէջ վարչութիւն մը հաստատեց, որուն նախագահ դրաւ զիշեպուդիք իշխանը և հրովարտակոյի մը ծանոց քաղաքացւոց իր բարի գիտաւորութիւնքը և փորձով ալ զայն ցուցուց, դրամ բաժնելով աղքատ և տնաւեր ընտանիքներուն:

Ոյս է ահա Ախլցիսայի մեծ և աղիւաւոր պատերազմը, որով իրուպ տիրացան վրահայոց մայրաքաղաքին, և որ Աղրիանուպօլսոյ գաշնադրութեամբ բոլորովին իրենց մնաց մինչև ցայսօր:

Սակայն Ախլցիսա միայն այս հարուածով էր պատերազմի վերքերէն, տակաւին ուրիշ ահաւոր մ'այլ իրեն գլխուն վրայ կախուած կեցեր էր, և ըստ Գրոյն, մարտիին ինայածը և թողուցածը, ջորեակը պիտի սպառեր լմնցըներ:

Ցայտնի է Ախլցիսայի անկումը ինչ աղջեցութիւն ունեցաւ բարձրագոյն դրան վրայ. Հալիպ և Քէօսէ Մէհմէտ փաշաները պաշտօնընկեց եղան և տեղերնին դրուեցան Հանի-Ալլէհ փաշա և հոչականուն ծերունի Հակիմ փաշա, որ հիմա Սերաստիոց կուսական էր: Զերկընցընենք այս երկու փաշայից հրատարակութիւնքը, հանդերձանքը, իրենց ծրագիրները և անոնց դործագրութիւնը. որոնց համար սակայն կարեսը կը համարէն գարուն չհասած

Նորէն տիրել Ախլցիսայի, որ նիւթապէս և բարյապէս իրենց համար օգտակար և քաջալերիչ կէտն էր : Սալէն փաշա այս բանիս համար շահեցաւ ուկըս միջոցով Աճարաներուն իշխանը զՈՀմէտ Պէկ, որ գրեթէ ինքնիշխան բարձրագոյն Դռնէն անկախ կ'իշխէր իր լունաբնակ բնակաց վրայ : Իր առաջին նշանին փութով 15,000 Լազ գումարուեցան զրոշուն տակ 'ի Սոլլէթ, ամենն ալ աւար ծեռք ձգելու յուսով. այս կամաւոր զօրաց միացան նաև 5,000 կամաւոր գեծեալք և 6 թնդ.անօթք : Միանգամայն Ախլցիսայի վրայ արշաւանկը ծածկելու համար, Սէրասիկը ձայն հանեց որ Ղարսի վրայ կը չուկը, մինչդեռ Խաղանատար օղու Օսմանի փաշա Տրապիզոնի կուսակալը, 3,000 հոգի ժողուած 'ի Պաթում՝ Կուրէկի դէմ պիտի երթար :

Փապրկիչ իմացաւ թշնամնոյն դիտաւորութիւնը և փութով Քերասոնի գունդէն ջոկատ մը զատելը յԱխլցիսա դրկեց օգնութեան. միանգամայն Պուրցոփ հազարապետը հրաման ընդունեցաւ երկու հետևեակաց ջոկատ գումարելով և մէկ խաղախներու գունդ և 5 թնդանօթով բռնելնախ Պորճոմի կիրճերը, զիմել յԱզգոր և հարուածել 'ի թիկանց զԱխլցիսա պաշարող բանակը, Ռէթիշ գունդեր ալ պիտի հասցընէր Մուրավիէֆ. և Հէս աւագ զօրավարն ալ պիտի դիմէր Աճարաց Պէկին երկիրները աւրշտըկելու :

ՅԱխլցիսա՝ Պետուդոփ իշխանը ժողվելով պահանորդաց գունդերը 'ի միջնարերդին՝ զիրենք խրախուսեր էր յամառ ընդդիմութեան մ'ահաւոր թշնամնոյն, որ արդէն հասեր էր 'ի Տիկոր (1829 փետր. 16) և իր եղայոր Ավտի-պէկ կը զիմէր բռնելու Պորճոմի կիրճերը : 18ին, 19ին Ահմէտ-պէկ Ախլցիսայէն քանի մը վէրսդ հեռու կը գտնուէր, և այս ահաւոր և սպառիչ թշնամնոյն դիմացէն քրիստոնեալք և Տաճիրք կը զիմէին դէպ 'ի քաղաք Պէպուտոփէն ապաւէն ինզրելու և Աճարաց գունդերուն աւարառութեանց

լուրը բերելու : Եւ արդարե այս բանակը բնաւ նմանութիւն մը չունէր առջի գնդերուն . ասոր նպատակը միայն աւարառութիւն էր : Քետրուարի 20ին առաւոտը Ահմէտ Պէկին դունդերը ամէն կողմանէ քաղաք մոտան խառնածայն ուրախութեան աղաղակներով և ամեն կողմ տարածուեցան : Քիչ վերջը գումարուած գտնուեցան միջնարերդին պարսպաց տակ և յարձակումը սկսան : Առանց ուշ զներով կարկտանման գնդակներուն, որ բերդէն վրանին կը թափէին, կատաղի մուլիցնութեամբ սկսան սանդուխներ դընել, բայց կարգ կարգ կամս սանդուխներէն կը զլորէին կամ սանդուխներուն ոսքը . յուսահատել չկար, ձներով և ձեռքերով և գոշումներով անհամար սպատնալիքներ կ'ընէին Ռուսաց, որոնք բնաւ վարկեան մը չկասեցան կռուելու մինչեւ որ Աճարները դիականց բազմութենէն չկարենալով կռուիլ ետ դարձան և քաղքին տներուն վրայ ինկան : Հօս ընթերցողաց խնայելու համար կը թողումնկարազրելու այն անգութե և անպատիւ տեսարանները օրոնք սոսկումն կը բերեն ամենուն : Յետոյ ապաւինեցան այն տուներուն մէջ որ պատուարաց կից էին և հօն կը կը հանդերձէին կռուելու բերդին հետ, և նորէն սանդուխ զնեելով վեր ելլալու համար . Քիչ վերջը կրակ ալ սկսան թափել քաղքին վրայ, բայց Ռուսաք բնաւ տեղիք չտուին : Ահմէտ-պէկ մոտածեց կանոնաւոր պաշարում մը սկսիլ : Փորձեց գետակին ընթացքը կտրել քաղքէն, բայց գործերին աւրուեցաւ Ռուսաց յանկարծակի յարձակմամբ մը : Ահմէտ - Պէկ առանց յուսահատելու, գէլերը գալու քաղքին դրան դիմեց, պատնէչ մը քաշեց որ անկէ վերջը կ'արգելուր որ և իցէ ելք մը քաղքէն : Օր օրուան վրայ պաշարելոց դիրքը կը ժանրանար, մանաւանդոյուսահատեր էին օգնութիւն մ'ընդունելու . և Ահմէտ-պէկ այնպէս շրջապատեր էր ըզքաղաքը որ ոչ մի լուր ներս կը մրտնար . միագամայն կը փութացընէր իր

եղբայրը երագ հասնիլ րունել զորճումի կիրճերը ուսկից մեծապէս կախումն ուներ գործոցն յաջողութիւնը : Նոյնը կը դիտէր նաև Պուրցով որ իր գունդերը գումարեր էր՝ ի Սուրամ, և լսելը Ովալափէկին մերձենալը, աճապարեց հասաւ րունելու առաջին անցքը : Նոյն միջոցին իր լրտեսներուն ձեռքով իմացաւ որ Տաճիկը անցնելով երկրորդ հունը, իրեն դէմ կը չուեն . և յիրաւի ԶԵԲՆ առաւօտը երկու բանակները դիմացէ դիմաց երկացն և կափւը սկսաւ, յորում Ավտի-պէկ տկարանալով առանց ետ դառնալու անցքը պաշտպանելու համար, ջանաց ինքզինքը ապա հովցընել յԱզգոր, և Պուրցով ազատ կը դիմէ դէպ յԱխցիսա ուր Ահմէտ-պէկ յետին յարձակումը չսկսած նուիրակ դրկեր էր պահանորդաց անձնատուր ըլլալու : Քէպուդով է իր արի գինակիցքը, Տաճկաց պատրաստուած միջոց, իրենք ալ ջանացեր էին կարկատել պատուարաց աւերեալ մասունքը և երգուեր էին անոնց վրայ ինկնալ մեռնիլ քան թողուլ թշնամոյն որ ներս մտնայ, Ահմէտ-պէկ յարձակումը փութով սկսաւ, որպէս զի օգնութեան գունդերը չհասած, տիրէ բերդին, բայց առաջին փորձը ելք մը չունցաւ, Երկրորդ օրը արևը ելած միջոցինուաք մեծ շփոթութիւնը մը դիտեցին Անարաց բանակին մէջ . նա մանաւանդ նաև նահանջի շարժում մը. Պէպուդով ստուգելու համար՝ կը սկսի ահաւոր կրակ դրակաց կը թափել անոնց վրայ, և յիրաւի անհնար է Նկարադրել թշնամեաց շփոթութիւնը : Ահմէտ-պէկ լսելով իր եղբօր պարտութիւնը և Պուրցովի մօտենալը նահանջ զարկեր էր :

Այս խառնակութեան միջոց, Պէպուդով հինգ ջոկատ առած և երկու լուծ հրանօթ, գուրս կ'ելաց քարքէն և կը սկսի խուճապեցնել թշնամունցն փախուտաը : Այս ատեն կը սկսի Տաճկաց կող

մէն վայնասունը և շիոթը Ահմէտ-պէկ քանի մանգամ կը ջանայ գուն-գերը ետ գարձընել և կոռուիլ . բայց մոփի ընող չկայ, մինչև որ Պէպուդով խոհամութիւն համարեցաւ այնչափ քիչ հոգով շատ չհեռանալ քաղքէն և նորէն ետ դարձաւ :

Պէպուդով քաղաքը մտնալով գտաւ թշնամեաց դասալիքներէն բազմութիւն մը, որոնք աւարտութեան ետևէ էին և ապաւիներ էին բերդին մօտ հիղերուն մէջ և չէին ուղեր անձնատուր ըլլալ . հրամայեց զօրուն որ կրակ տան անոնց, և ով որ խոյս տուաւ կրակէն սրոյ ճարակ եղաւ . և այսպէս Ճամուան մէջ թշնամեաց հետք մը չըմաց . Երկու ժամ վերջն ալ կը հասնէին Պուրցովի գունդերը, Այս պաշարման միջոց Անարաց կողմանէ 3,000 մը ինկեր էին և Ռուսաց պահանորդներէն ալ 100 հոգի ըստ իրենց համարյոն :

Բայց Ախցիսա, որ արդէն առջի պատերազմով կորսունցուցեր էր իր շքեղութիւնը, այս Երկրորդ կոռուով աւերակաց կցոտ մը գարձաւ : Բնակչաց մեծ մասը խոյս տուեր էին և որչափ որ իուուք յորդորեցին նորէն զառնալը նակելու, միայն քրիստոնեացն եղան որյանձն առին դառնալու և արտատուելու իրենց ազէտքը, իրենց Հայրենի վաստաններուն աւերը և աւերակը, իրէ վերջը երբ Ռուսաք կը քաշուէին իրենց տիրած ուրիշ քաղաքներէն, և իրենց կը թողուէր Ախցիսա Ադրիանուպօլսոյ դաշնագրութեամբ, այն ատեն խել մը հայ բնատանիքներ գալով Ղարսէն և Կարնէն, սկսան շինել այն արուարձանքը որ յետոյ կոչուեցան Նոր-Ախցիսա, և որչափ որ Նոր քաղաքս ալ սկսաւ փութով չէննալ և պայծառանալ, սակայն Ախցիսայի այս Երկու պատերազմներով ստացած վէրքերը չբժշկուեցան :